



Գործ № ՇԴ/0624/02/15

**ՎՃԻՌ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

02 փետրվարի 2016թ.

ք. Գյումրի

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ**

նախագահությամբ՝ դատավոր	Հ.Ղազարյանի
քարտուղարությամբ	Ս.Մուրադյանի
հայցվորի ներկայացուցիչներ	1. Գ.Բաղդասարյանի 2. Վ.Եփրեմյանի
պատասխանող	Անահիտ Փանոսյանի,
որը հանդես է եկել նաև որպես պատասխանող Ազնիվ	Փանոսյանի ներկայացուցիչ,
պատասխանող Անահիտ Փանոսյանի	
ներկայացուցիչ	Ս.Մխիթարյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան> պետական կառավարչական հիմնարկի (գրանցման վկայական թիվ 01ԲՊ01216, ՀՎՀՀ՝ 05507437) ընդդեմ Անահիտ Էդիկի Փանոսյանի (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AM 0520703, տրված 16.11.2011թ.-ին 016-ի կողմից), Ազնիվ Հրայրյայի Փանոսյանի (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AN 0718945, տրված 21.11.2013թ.-ին 016-ի կողմից) և Գոռ Հրայրյայի Փանոսյանի՝ ապօրինի զբաղեցրած բնակարանից վտարելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**Գործի դատավարական նախապատմությունը**

10.03.2015թ.-ին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում /այսուհետ՝ նաև Դատարան/ մուտքագրվել է <Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան> պետական կառավարչական հիմնարկի /այսուհետ՝ նաև Մարզպետարան/ ընդդեմ Անահիտ Էդիկի Փանոսյանի և Ազնիվ Հրայրյայի Փանոսյանի՝ ապօրինի զբաղեցրած բնակարանից վտարելու պահանջով:

Դատարանի 12.03.2015թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և գործը նախապատրաստվել է դատաքննության:

03.06.2015թ.-ին Դատարանում մուտքագրվել է Անահիտ Էդիկի Փանոսյանի և Ազնիվ Հրայրյայի Փանոսյանի կողմից ներկայացված գրավոր առարկությունները:

Դատարանի 11.08.2015թ.-ի արձանագրային որոշմամբ գործով նշանակվել է դատաքննություն:

Դատարանի 05.11.2015թ.-ի որոշմամբ քաղաքացիական գործի քննությունը վերսկսվել է:

Դատարանի 08.12.2015թ.-ի արձանագրային որոշմամբ Գոռ Հրայրյայի Փանոսյանը ներգրավվել է որպես երրորդ պատասխանող:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԳՐԱՆՈՒՄ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ  
17/02-11



Գոռ Հրայչայի Փանոսյանի կողմից կամ անունից հայցադիմումի պատասխան չի ներկայացվել:

**Հայցվորի իրավական դիրքորոշումը**

Հայցվորի ներկայացուցիչ Խ.Պողոսյանը՝ հայցադիմումով, իսկ ներկայացուցիչներ Գ.Բաղդասարյանը և Վ.Եփրեմյանը՝ գործի քննության ընթացքում, բանավոր, հայցապահանջը հիմնավորել են հետևյալ փաստարկներով.

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից 2006թ.-ի հունիսի 14-ին տրված՝ սեփականության թիվ 1966375 վկայականի համաձայն՝ Գյումրի քաղաքի Անի թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքը, այդ թվում՝ նաև թիվ 8 բնակարանը, հանդիսանում է ՀՀ Շիրակի մարզպետարանի սեփականությունը: Ըստ հայցվորի ներկայացուցիչների՝ պատասխանողները նշված բնակարանն զբաղեցնում են ապօրինի:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը՝ Մարզպետարանի ներկայացուցիչները հայտնել են, թե ապօրինի կերպով զբաղեցնելով Գյումրի քաղաքի Անի թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի թիվ 8 բնակարանը, պատասխանողները գույքի սեփականատիրոջը զրկում են սեփական գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու իրավունքից, ինչն անթույլատրելի է:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, հայցվորի ներկայացուցիչները խնդրել են Անահիտ Էդիկի Փանոսյանին, Ազնիվ և Գոռ Հրայչայի Փանոսյաններին փտարել ապօրինի զբաղեցրած՝ Գյումրի քաղաքի Անի թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի թիվ 8 բնակարանից: Խնդրել են նաև պատասխանողներից բռնագանձել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Որպես պահանջի հիմնավորում՝ Դատարանին ներկայացրել են հետևյալ ապացույցները.

- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից տրված՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման թիվ 1966375 վկայականը /գրանցված միասնական թիվ 08-001-1-3 մատյանի 000038 համարի տակ/;


- ՀՀ կառավարության 19.09.2002թ.-ի թիվ 1792-Ն որոշման թիվ 1 հավելվածը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրությունը,

- «Ինտեկոբանկ» ՓԲ ընկերության <Գյումրի> մասնաճյուղի վճարման թիվ 730 հանձնարարականը:

**Պատասխանողների իրավական դիրքորոշումը**

Պատասխանողներից Անահիտ Փանոսյանը, նաև որպես Ազնիվ Փանոսյանի ներկայացուցիչ՝ գրավոր առակություններում, իսկ Անահիտ Փանոսյանը և նրա ներկայացուցիչ Ս.Մխիթարյանը՝ գործի քննության ընթացքում /այսուհետ բոլորը միասին՝ նաև պատասխանող կողմ/, բանավոր, առարկելով հայցի դեմ, մասնավորապես հայտնել են հետևյալը.

պատասխանող Անահիտ Փանոսյանն իր չորս անձից բաղկացած ընտանիքով հանդիսանում են 1988 թվականի երկրաշարժից անօթևան: <Ադետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտադերթ հատկացման կարգը հաստատելու մասին> ՀՀ կառավարության 10.06.1999թ.-ի թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ պատասխանողների ընտանիքը հաշվառված է



երկրաշարժի հետևանքով անօթևան, բնակարանի կարիքավոր ընտանիքների հերթացուցակում 3 /երեք/ սենյականոց բնակարան ստանալու համար, օգտվում է 13-րդ կետի արտոնություններից՝ թիվ 439 համարով:

Մինչ 1997-1998 թվականներն Անահիտ Պապոյանն ընտանիքի հետ միասին բնակվել է Գյումրի քաղաքի Արագած թաղամասում տեղադրված՝ պետության կողմից հատկացված թիվ 103/122 տնակում, որից հետո իրականացվող շինարարական աշխատանքների կապակցությամբ տնակը տեղահանվել է: Պատասխանողների և Գյումրու քաղաքապետարանի միջև 02.12.2002թ.-ին կնքվել է պայմանագիր՝ կառուցվող շենքից բնակարան հատկացնելու մասին, ապա կնքվել է պայմանագիր՝ երկու տարի ժամանակով վարձավճար տալու մասին՝ մինչև շենքի կառուցումը: ՀՀ կառավարության 2002թ.-ի թիվ 1935-Ն որոշմամբ բնակարանների բաշխումը հանձնվել է Շիրակի մարզպետարանին, այնուհետև՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությանը: Ըստ պատասխանող կողմի՝ իրենց բնակարան հատկացնելու հարցը մոռացվել է, և մինչ 2014 թվականը նրանք ստիպված են եղել բնակվել կամ վարձակալությամբ, կամ երկրից ժամանակավորապես բացակայող ազգականների տներում:

Պատասխանող կողմը գտնում է, որ 2002թ.-ից հետո, բնակարանների բաշխումն իրականացնելիս, Մարզպետարանը նրանց հանդեպ դրսևորել է Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի խախտում, ցուցաբերելով կամայական մոտեցում՝ բնակարանների բաշխման հարցում: Ըստ պատասխանողների՝ ՀՀ կառավարության թիվ 432 որոշման համաձայն՝ բնակարանների բաշխումը պետք է կատարվի ըստ արտոնությունների հերթահամարների, մինչդեռ Մարզպետարանը կամայական ընտրությամբ բաշխումը կատարել է մինչև 29-րդ կետը՝ շրջանցելով 13-րդ կետի արտոնություն ունեցող ընտանիքին:

Ըստ պատասխանող կողմի՝ վերջին տարիներին բնակարանների բաշխումը կատարվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից, որն իր 19.02.2013թ.-ի պատասխան գրությամբ հայտնել է, թե թեև Անահիտ Փանոսյանի ընտանիքը հաշվառված է 3-սենյականոց բնակարան ստացողների հերթացուցակում՝ 439 համարի տակ, այնուամենայնիվ, ՀՀ կառավարության 15.09.2011թ.-ի թիվ 1329-Ն որոշմամբ՝ նշված ծրագրի շրջանակներում բնակարան ստացող ընտանիքի անդամների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերով համալրված փաթեթների ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 01.11.2011թ.-ը: Պատճառաբանությամբ, թե անհրաժեշտ փաստաթղթերն Անահիտ Փանոսյանը ժամանակին չի ներկայացրել, վերջինիս հայտնվել է, որ նրա բնակարանային հարցը Գյումրի քաղաքում իրականացման փուլում գտնվող՝ բնակապահովման ծրագրի շրջանակներում ներկայումս դիտարկվել չի կարող:

Անահիտ Փանոսյանը հայտնել է, թե փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել հարգելի պատճառներով:

Պատասխանողները հայտնել են, թե 26 /քսանվեց/ տարի շարունակ գտնվել է անօթևանի կարգավիճակում, սակայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ապօրինի գործողությունները չեն բողոքարկել, քանի որ համբերատար սպասել են նոր ծրագրին: 2014 թվականին կրկին գործել է անօթևանների համար բնակարանների գնման ծրագիր: Ըստ պատասխանողների՝ նրանք ներկայացրել են համապատասխան դիմում, սակայն Մարզպետարանն իրենց փաստաթղթերը չի ընդունել՝ պատճառաբանությամբ, որ նրանք մեկ անգամ արդեն մերժվել են: Այսինքն, ըստ պատասխանող կողմի՝ Մարզպետարանը հերթական անգամ դրսևորել է կամայական մոտեցում՝ փաստաթղթերը չի ընդունել, դրանք ՀՀ քաղաքաշինության նախարարությանը չի ուղարկել և դիմումին չի պատասխանել, այդպիսով իրենց՝ անօթևաններին, հերթական անգամ զրկել է բնակարան ստանալու հնարավորությունից:

Ըստ պատասխանողների՝ իրենց այլ բան չի մնացել, քան զբաղեցնել պետությանը պատկանող, ազատ, որևէ մեկի կողմից չզբաղեցված երկու սենյականոց բնակարանը: Շիրակի մարզպետարանը, որպես բնակարանի սեփականատեր, դիմել է ոստիկանություն, սակայն գործի նյութերով պարզվել է, որ պատասխանողների կողմից հակաօրինական որևէ գործողություն չի կատարվել: Պատասխանողները հայտարարել են, թե բնակարանն ազատել չեն պատրաստվում, և որ կդիմեն ցանկացած քայլի՝ բնակարան ստանալու իրենց իրավունքը պաշտպանելու համար, քանի որ թիվ 432 որոշման 13-րդ կետի արտոնությամբ բնակարանների բաշխումը վաղուց կատարվել է:

Ըստ պատասխանող կողմի՝ Շիրակի մարզպետարանը, որը գործում է պետության անունից, ունենալով իրենց բնակարանով ապահովելու պարտավորություն, մի քանի անգամ իրենց խաբել է. նախ քանդել է իրենց կացարանը, այնուհետև, 2002 թվականին, կացարանը քանդելու դիմաց, Գյումրի համայնքն իրենց հետ կնքել է բնակարան հատկացնելու պայմանագիր, 2003 թվականից երկու տարի շարունակ հատկացրել է վարձավճարի գումարը, ինչից հետո Գյումրի համայնքն իր պարտավորությունը համարել է դադարած:

Պատասխանող կողմը հայտնել է, թե Գյումրի համայնքն իրենց բնակարան չի հատկացրել, քանի որ բնակարանների բաշխման իրավասությունը փոխանցվել է Շիրակի մարզպետարանին: Մարզպետարանն իր հերթին դրսևորել է կամայականություն, բնակարանի փոխհատուցման հարցը չի լուծել, չի հարգել Գյումրու քաղաքապետարանի պայմանագիրը, բնակարաններով ապահովել է մինչև հերթացուցակի 29-րդ կետի արտոնություններ ունեցողներին այն դեպքում, երբ պետությունն ընդունում է իրենց՝ պատասխանողների անօթևան լինելու փաստը: Պատասխանող կողմը հայտնել է, թե իրենց կողմից ներկայացվել է փաստաթղթերի ամբողջական փաթեթը, սակայն իրենց բնակարան հատկացնելու դիմումը մերժվել է՝ առանց որևէ պատճառ նշելու, իսկ հարցը ձգձգելուց հետո իրենց հայտարարել են, թե ծրագիրն ավարտված է:

Պատասխանող կողմը գտնում է, որ եթե պետությանը պատկանող բնակարանն զբաղեցնելը համարվում է անօրինականություն, ապա այն հետևանք է Շիրակի մարզպետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից իրենց հանդեպ ցուցաբերված անօրինականության: Պատասխանողները հայտնել են, թե իրենք ունեցել են երեք սենյականոց բնակարան ստանալու իրավունք, սակայն տվյալ դեպքում համաձայն են նաև դուրս գալ անօթևանության կարգավիճակից՝ իրենց երկու սենյականոց բնակարան հատկացնելու դեպքում: Հայտնել են, թե որևէ կացարան չունեն, և վտարվելու դեպքում կհայտնվեն փողոցում:

Ի լրումն վերը շարադրված առարկությունների, վկայակոչելով ՀՀ կառավարության 19.09.2002թ.-ի թիվ 1792-Ն որոշումը՝ <ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու մասին, Շիրակի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը, պատասխանող կողմը հայտարարել է, թե <ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկը պատշաճ հայցվոր չի հանդիսանում, ինչը հիմք է հայցը մերժելու համար:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ և 274-րդ հոդվածները՝ պատասխանող կողմը գտել է, որ ապօրինի զբաղեցրած բնակարանից վտարվելու պահանջով կարող է հանդես գալ միայն գույքի սեփականատերը, մինչդեռ՝ ըստ պատասխանողների՝ հայցը ներկայացրել է ոչ թե գույքի սեփականատերը, այլ <ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկը, որը չի ներկայացրել լիազորագիր՝ Մարզպետարանի անունից հանդես գալու իրավունքի մասին: Բացի այդ, ըստ պատասխանող կողմի՝ հայցվորը չի ներկայացրել ապացույց այն

մասին, որ հայցը բխում է գույքի սեփականատիրոջ շահերից, որ պահանջը Շիրակի մարզպետարանի կամահայտնությունն է, և որ գույքի սեփականատերն այն հանձնել է հայցվորի հավատարմագրային կառավարմանը:

Խնդրել է հայցը մերժել երկու հիմքերով, այն է՝ 1/. հայցն անհիմն է, 2/. <ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկը պատշաճ հայցվոր չէ:

Որպես իր առարկությունների հիմնավորում՝ պատասխանողները Դատարանին ներկայացրել են հետևյալ ապացույցները.

- Գյումրու քաղաքապետի 12.01.2004թ.-ի թիվ 1/1-01/27 գրությունը,
- Գյումրու քաղաքապետարանի և քաղաքացի Անահիտ Փանոսյանի միջև 10.05.2002թ.-ին և 17.04.2003թ.-ին կնքված պայմանագրերը՝ ամսեկան 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ տրամադրելու մասին,
- ՀՀ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 18.12.2014թ.-ի թիվ 02/03.1/9737-14 պատասխան գրությունը,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի 19.02.2013թ.-ի թիվ 03/13.1/960-13 պատասխան գրությունը,
- ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի պետի 06.02.2015թ.-ի թիվ 70/7-578 պատասխան գրությունը,
- ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ Ա.Ղազարյանի 06.02.2015թ.-ի որոշումը՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին,
- ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի 02.07.2015թ.-ի թիվ 02.2/3251-15 պատասխան գրությունը,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի 19.08.2015թ.-ի թիվ 03/13.1/4664-15 պատասխան գրությունը,
- ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի 28.12.2015թ.-ի թիվ 02.2/6631-15 պատասխան գրությունը,
- Հայաստանի Համահայկական Հիմնադրամի գործադիր վարչության 12.01.2016թ.-ի թիվ 2-005 պատասխան գրությունը:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը

Դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Գյումրի քաղաքի <Անի> թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի նկատմամբ գրանցված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքը /հիմք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից տրված՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման թիվ 1966375 վկայականը /գրանցված միասնական թիվ 08-001-1-3 մատյանի 000038 համարի տակ//:

2) Գյումրի քաղաքի <Անի> թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի թիվ 8 բնակարանն առանց օրինական հիմքերի մուտք են գործել և զբաղեցնում են պատասխանողներ Անահիտ Էդիկի Փանոսյանը, Ազնիվ Հրաչյայի Փանոսյանը և Գոռ Հրաչյայի Փանոսյանը /հիմք՝ պատասխանող Անահիտ Էդիկի Փանոսյանի՝ նաև պատասխանող Ազնիվ Հրաչյայի Փանոսյանի անունից տրված ցուցմունքները և բացատրությունները, գործին մասնակցող անձանց ներկայացուցիչների բացատրությունները, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի պետի 06.02.2015թ.-ի թիվ 70/7-578 պատասխան գրությունը, ՀՀ

ուստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ Ա.Ղազարյանի 06.02.2015թ.-ի որոշումը՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին/:

**Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Լսելով հայցվորի ներկայացուցիչներին, պատասխանողին, պատասխանողների ներկայացուցիչներին, վերլուծելով և գնահատելով գործի տվյալներն ու դատաքննությամբ հետազոտված ապացույցները, Դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ դատաքննությամբ հաստատված հետևյալ փաստական հանգամանքների և դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերի հիման վրա.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

- 1) գրավոր և իրեղեն ապացույցներով.
- 2) փորձագետների եզրակացություններով.
- 3) վկաների ցուցմունքներով.
- 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով: Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր որ իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից տրված՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման թիվ 1966375 վկայականի /գրանցված միասնական թիվ 08-001-1-3 մատյանի 000038 համարի տակ/ հետազոտման արդյունքում Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Գյումրի քաղաքի «Անի» թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի նկատմամբ գրանցված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքը:



ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը պետական սեփականություն է:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Պատասխանող Անահիտ Էղիկի Փանոսյանի կողմից՝ նաև պատասխանող Ազնիվ Հրաչյայի Փանոսյանի անունից տրված ցուցմունքների և բացատրությունների, գործին մասնակցող անձանց ներկայացուցիչների բացատրությունների հիման վրա, ինչպես նաև ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի պետի 06.02.2015թ. -ի թիվ 70/7-578 պատասխան գրության և ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ Ա.Ղազարյանի 06.02.2015թ. -ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման հետազատման արդյունքում Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Գյումրի քաղաքի <Անի> թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի թիվ 8 բնակարանի մուտքի դռան փականի միջուկը փոխելու միջոցով, առանց օրինական հիմքերի մուտք են գործել և զբաղեցնում են պատասխանողներ Անահիտ Էղիկի Փանոսյանը, Ազնիվ Հրաչյայի Փանոսյանը և Գոռ Հրաչյայի Փանոսյանը:


ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները գուցորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Պատասխանելով նախագահողի այն հարցին, թե որն է այն հիմքը, որն իրենց իրավունք է տալիս զբաղեցնելու այլ անձի սեփականությունը հանդիսացող բնակարանը, պատասխանող կողմը հայտնել է, թե 26 /քսանվեց/ տարի շարունակ գտնվել են անօթևանի կարգավիճակում, իսկ Մարզպետարանը նրանց նկատմամբ շարունակաբար դրսևորել է կանայական մոտեցում՝ արդյունքում իրենց զրկելով բնակարան ստանալու հնարավորությունից: Ըստ պատասխանողների՝ իրենց այլ բան չի մնացել, քան զբաղեցնել պետությանը պատկանող, ազատ, որևէ մեկի կողմից չզբաղեցված բնակարանը:

Դատարանը փաստում է, որ պատասխանող կողմն ըստ էության ընդունել է այն հանգամանքը, որ խնդրո առարկա բնակարանը նրանք զբաղեցնում են առանց օրինական հիմքերի, սակայն գտնում են, որ իրենց գործողությունները Մարզպետարանի անօրինական և կանայական գործողություններին համարժեք են, այսինքն, ըստ պատասխանողների՝ ապօրինի կերպով զբաղեցնելով Մարզպետարանի սեփականությունը հանդիսացող բնակարանը, իրենք ըստ էության իրականացրել են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված իրավունքների ինքնապաշտպանություն:

Պատասխանելով նախագահողի այն հարցին, թե օրենքով սահմանված ինչպիսի քայլեր են նրանք ձեռնարկել՝ իրենց խախտված իրավունքները պաշտպանելու համար, պատասխանող կողմը հայտարարել է, թե պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ապօրինի գործողությունները երբևէ չեն վիճարկել, քանի որ շարունակել են



վատահեղ վերջիններիս և համբերատար սպասել են բնակարանների բաշխման նոր ծրագրին:

Դատարանը հիմնավոր չի համարում պատասխանողների՝ վերը շարադրված փաստարկները՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը: Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին /ընդգծումը Դատարանին է/:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդված համաձայն՝ Դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

Սույն քաղաքացիական գործի փաստական տվյալների և վերը շարադրված իրավական նորմերի համադրության և համալիր վերլուծության արդյունքում Դատարանը գալիս է այն հետևության, որ սույն գործով պատասխանողները, 26 /քանվեց/ տարի շարունակ համարելով, որ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ իրենց իրավունքները խախտվում են, չեն օգտվել օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրենց իրավունքները դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության իրավունքից, փոխարենը նախընտրել են իրենց բնակարանային խնդիրը լուծել ուրիշի, տվյալ դեպքում Մարզպետարանի սեփականությունը հանդիսացող բնակարանն ապօրինի կերպով զբաղեցնելու միջոցով:

Դատարանը փաստում է, որ պատասխանողները երբևէ զրկված չեն եղել և այժմ էլ զրկված չեն իրենց իրավունքներն օրենքով սահմանված կարգով պաշտպանելու հնարավորությունից, որից, սակայն չեն օգտվել: Հետևաբար՝ նրանց այն փաստարկը, թե խնդրո առարկա բնակարանն ապօրինի կերպով զբաղեցնելը Մարզպետարանի ապօրինությունների հետևանքն է, հիմնավոր չէ:

Նման պայմաններում Դատարանը քննության առարկա չի դարձնում պատասխանողների անօթևանության, բնակարանների բաշխման, բաշխման կարգին կամ դրա խախտմանը վերաբերող հարցերը, քանի որ գործը քննվում է բացառապես հայցի շրջանակներում, այն է՝ ապօրինի զբաղեցված բնակարանից վտարելը, իսկ պատասխանողների կողմից բարձրացված հարցերը կարող են քննության առարկա դարձվել դատավարական համապատասխան կարգի և ընդդատության կանոնների




պահպանմամբ ներկայացված հայցադիմումի կամ դիմումի հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:

Պատասխանողների կողմից ներկայացված՝ Գյումրու քաղաքապետի 12.01.2004թ.-ի թիվ 1/1-01/27 գրության, Գյումրու քաղաքապետարանի և քաղաքացի Անահիտ Փանոսյանի միջև 10.05.2002թ.-ին և 17.04.2003թ.-ին կնքված՝ ամսական 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ տրամադրելու մասին պայմանագրերի, ՀՀ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 18.12.2014թ.-ի թիվ 02/03.1/9737-14 պատասխան գրության, ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի 19.02.2013թ.-ի թիվ 03/13.1/960-13 պատասխան գրության, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի 02.07.2015թ.-ի թիվ 02.2/3251-15 պատասխան գրության, ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի 19.08.2015թ.-ի թիվ 03/13.1/4664-15 պատասխան գրության, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի 28.12.2015թ.-ի թիվ 02.2/6631-15 պատասխան գրության և Հայաստանի Համահայկական Հիմնադրամի գործադիր վարչության 12.01.2016թ.-ի թիվ 2-005 պատասխան գրության համալիր հետազոտման արդյունքում պարզվել է, որ պատասխանողները 4 անձով հաշվառված են երկրաշարժի հետևանքով անօթևան, բնակարանի կարիքավոր ընտանիքների հերթացուցակում՝ երեք սենյականոց բնակարան ստանալու համար, և որ նրանք օգտվում են 13-րդ կետի արտոնությունից՝ թիվ 439 հերթական համարով: Բացի այդ, պարզվել է, որ ընտանիքի անդամներին վերաբերող՝ պահանջվող համապատասխան փաստաթղթերը Շիրակի մարզպետարան ժամանակին չեն ներկայացնելու հետևանքով բնակարանային գործ չի կազմվել և ՀՀ քաղաքաշինության նախարարությանը չի ուղարկվել: Պարզվել է նաև, որ Գյումրի քաղաքի <Անի> թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի կառուցման ծրագիրը մեկնարկել է 1997թ.-ին Լիբանանի հայ համայնքի հատկացրած միջոցներով՝ 1988 թվականի երկրաշարժից տուժած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով:

Դատարանը փաստում է, որ Գյումրի քաղաքի <Անի> թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի նկատմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանի սեփականության իրավունքը գրանցված լինելու պայմաններում պատասխանող կողմը պետք է ներկայացներ թույլատրելի և վերաբերելի այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր վիճելի բնակարանը նրա կողմից զբաղեցված լինելու օրինական հիմքերի առկայությունը, սակայն նման որևէ ապացույց Դատարանին չի ներկայացվել:

Ինչ վերաբերում է պատասխանողների կողմից ներկայացված՝ Գյումրու քաղաքապետի 12.01.2004թ.-ի թիվ 1/1-01/27 գրությանը, Գյումրու քաղաքապետարանի և քաղաքացի Անահիտ Փանոսյանի միջև 10.05.2002թ.-ին և 17.04.2003թ.-ին կնքված՝ ամսական 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ տրամադրելու մասին պայմանագրերին, ՀՀ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի 18.12.2014թ.-ի թիվ 02/03.1/9737-14 պատասխան գրությանը, ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի 19.02.2013թ.-ի թիվ 03/13.1/960-13 պատասխան գրությանը, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի 02.07.2015թ.-ի թիվ 02.2/3251-15 պատասխան գրությանը, ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալի 19.08.2015թ.-ի թիվ 03/13.1/4664-15 պատասխան գրությանը, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի 28.12.2015թ.-ի թիվ 02.2/6631-15 պատասխան գրությանը և Հայաստանի Համահայկական Հիմնադրամի գործադիր վարչության 12.01.2016թ.-ի թիվ 2-005 պատասխան գրությանը, ապա Դատարանը գտնում է, որ սույն հայցի առարկայի շրջանակներում դրանք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն



ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, ուստի՝ դատարանը դրանք հանում է ապացույցների կազմից:

Անդրադառնալով պատասխանող կողմի այն փաստարկներին, համաձայն որոնց՝ <ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ> պետական կառավարչական հիմնարկը պատշաճ հայցվոր չի հանդիսանում, որ նա լիազորված չէ Մարզպետարանի անունից հանդես գալու համար, Դատարանը գտնում է, որ պատասխանող կողմի նշված պնդումը հիմնավոր չէ՝ հետևյալ պատճառարանությամբ.

ՀՀ կառավարության 19.09.2002թ.-ի թիվ 1792-Ն որոշման թիվ 1 հավելվածը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության 7-րդ մասի համաձայն՝ մարզպետարանի աշխատակազմն իր իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Նույն կանոնադրության 23-րդ մասի ա) կետի համաձայն՝ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարն իր իրավասությունների սահմաններում, առանց լիազորագրի, հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում է նրա շահերը, իր լիազորությունների սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար /ընդգծումը Դատարանինն է/:

Դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կանոնադրության՝ վերը շարադրված նորմերի էությունից ուղղակիորեն բխում է գույքային իրավունքներ ունենալու և դրանց պաշտպանության նպատակով դատարանում որպես հայցվոր հանդես գալու՝ Մարզպետարանի աշխատակազմի լիազորությունը, ինչպես նաև աշխատակազմի ղեկավարի՝ դատարաններում առանց լիազորագրի Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու իրավասությունը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ պատասխանող կողմի պնդումն առ այն, թե հայցը ներկայացվել է ոչ այն անձի կողմից, ում պատկանում է պահանջի իրավունքը, հիմնավոր չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպիսով, բազմակողմանիորեն հետազոտելով և օբյեկտիվորեն գնահատելով գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործի փաստերի և վերը շարադրված իրավական նորմերի հետ, Դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է, բխում է օրենքից և գործի նյութերից, հետևաբար՝ ենթակա է բավարարման:

### Դատական ծախսեր

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից (.....):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների համար:

<Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններին տրվող ոչ գույքային պահանջով հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է բազային տուրքի քառապատիկի չափով:



ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցադիմումով ներկայացված պահանջը ենթակա է բավարարման, իսկ հայցվորի կողմից նախապես վճարվել է 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու համար օրենքով սահմանված պետական տուրք, Դատարանը գտնում է, որ պատասխանողներից հոգուտ հայցվորի պետք է բռնագանձել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես վերջինիս կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, 140՝ հոդվածով՝ դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

Հայցը բավարարել:

Անահիտ Էդիկի Փանոսյանին, Ազնիվ Հրաչյայի Փանոսյանին և Գոռ Հրաչյայի Փանոսյանին վտարել Գյումրի քաղաքի Անի թաղամասի 13-րդ փողոցի թիվ 11ա շենքի թիվ 8 բնակարանից:

Անահիտ Էդիկի Փանոսյանից, Ազնիվ Հրաչյայի Փանոսյանից և Գոռ Հրաչյայի Փանոսյանից հոգուտ <Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան> պետական կառավարչական հիմնարկի բռնագանձել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում վճիռը կարող է կատարվել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱԳՈՐ



Հ.ՂԱԶԱՐՅԱՆ

2/հարց Տրևել 5 ցրիկառանակ ավի մեզ 26.10.2016թ.

Պատրաստվել



Պալատական